


0581

I.

4









# ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Գիտական, Գրագիտական, Առուեսագիտական,  
եւ Մանկավարժական



Կ'սպառիմ՝ լուսաւորելու համար

1901 ՀՈԿՏԵՄԲԵՐ 20 — ԹԻԻ 1

ՏՊԱԴՐ. ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Р. В. С. П. И. Т. И. С.

К. В. С. П. И. Т. И. С.

К. В. С. П. И. Т. И. С.

К. В. С. П. И. Т. И. С.

К.

К. В. С. П. И. Т. И. С.

К. В. С. П. И. Т. И. С.



ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

— هانراکیداغ —

HANKIDAGUE

ԱՂԳԱՅԻՆ ԵՒ ՄԻՋԱՂԳԱՅԻՆ

مجموعه علوم

JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 1

20 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1901

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Առ մեր պատուարժան ընթերցողներ, [Բաժանորդներ, Գործակալներ,  
Թղթակիցներ ու Աւխասակիցներ :



Հանրագիտակ՝ 1901 Հոկտեմբեր ամսին սկսեալ կանոնաւոր կերպով կը հրատարակուի, ամիսը երեք անգամ, Նշան Կ. Պէրպէրեանի տպարանէն, որ ստանձնած է անոր բոլոր ծախքերը հոգալ և հասոյթները գանձել, հրատարակութիւնն անընդհատ պահելով՝ ամէն կարգի ընթերցողներն ու բաժանորդներն գոհացընել իր բարոք մատակարարութեամբ ու ծանօթ ուղղամտութեամբ ի քաջալերութիւն մեր:

Հանրագիտակ պատկերազարդ է, ունի իրեն յատուկ հատընտիր ու ծուծաւոր նիւ-

թեր, և նախկին Բուրասան Մանկանցի դրութեան համաձայն ալ՝ իր նիւթերուն կէսը մանուկներու հրահանգիչ ու բարոյացուցիչ ընթերցման յատուկ դրուածներու, պատկերներու և նկարներու նուիրուած, կէսն ալ չափահաս, զարգացեալ ընթերցողներու հմտութեան սեպհական նիւթերու յատկացուած է՝ մեծերու և թէ մանուկներու միանգամայն հաճոյ ու օգտակար լինելու կրկին բարի ու քաջալերելի նպատակով:

Հանրագիտակի տպագրութիւնը խնամեալ, թուղթը՝ մաքուր, մանուկներու յատկացեալ նիւթերը՝ իրենց յարմար գեղեցիկ պատկերներով զարդարուն: Կը պարունակէ նաեւ մրցանակով վարձատրելի հանելուկներ, գիտական թէ գրական զբօսեցուցիչ հարցումներ ու առեղծուածներ: Կը շարունակէ նաեւ հրատարակել խիստ հետաքրքրական ու գիտական թիւ Վէրնի մէկ վէպը:

Հանրագիտակի բարեկամներու և ընթերցողներու համար ցարդ անհաճոյ եղած ընդ-

հասուններուն, որք մեր կամքէն անկախ ու հանրագոտաւ եռանդուն փափաքին հակառակ՝ պարագաներէ ու խնդիրներէ ծագում կ'առնէին, միանգամ ընդ միշտ վերջ տալու և թերթիս կանոնաւոր ու յարատեւելի շարունակութիւնը տեսնելու թէ վայելելու փափաքով և նպատակով, անոնց ըրած ու ընելիք համակիր վստահութիւնն ու ամէն քաջալերութիւն արդարացնելու համար է որ թերթիս անընդհատ ու օգտաշատ հրատարակութեան և անոր ամէն տեսակ մատակարարութեան լիազօր հոգն ու խնամքն յանձնած ենք, կրկնակ համահաճ հաւանութեամբ կնքեալ պայմանագրութեամբ, տպարանապետ Տիար Նշան Կ. Պէրպէրեանի:

Տիար Նշան Կ. Պէրպէրեան, իբրեւ անկախ տպարանի տէր և գրաշար, իբրեւ հրատարակիչ ու փորագրիչ իր խոստումը յարգելու, գործադրելու, ինչպէս իմ՝ նոյնպէս իմ նմանեացս շատերու մասին՝ փայլուն հաստատուն փորձերը տալուն, իր անձնական ու նիւթական շահերը՝ յօգուտ հանրային մտքի լուսաւորութեան՝ զոհելու աստիճան, մինչեւ ցարդ ըրած նախանձախնդիր ու բազմաթիւ հրատարակութեանց, իր ամէնուն ծանօթ մաքուր տպագրութեան, իր ասպարէզին ու արհեստին գործերուն անընդհատ շարունակութեան շնորհիւ, արժանացած է արդէն Հասարակութեան ամէն կարգի գիր, գիրք ու լրագիր կարգացողներու համակրանքին, համարման ու վստահութեան, որու վրայ աւելի ծանրանալ աւելորդ կը համարինք: Նամանաւանդ, քանի որ նախապէս՝ Ղալաթիոյ Կեդրոնական Վարժարանին, և ապա Պոլսոյ Ֆրանսական գիշերօթիկ Գօլէթին մէջ ուսումն յաջողապէս աւարտած և առաջնակարգ շրջանաւարտի վկայականովը փայլուն զաւակը Պրն. Զարեհ, ինքն ալ՝ Հօրը արհեստն ու ասպարէզը նախասիրօրէն ընդգրկած, այսօր Պոլսոյ մէջ գիտուն ու կարողագոյն գրաշար ու տպագրիչ մ'է, ըլլալով հանդերձ մեր գրադիտական ու խմբագրական ճաշակովն ու գրածներովն արդէն Ազգ. լրագիրներու ընթերցողաց ծանօթացած նորահաս երիտասարդներէն մին:

Երբ Պէրպէրեան Հայր և Որդի, միանալով Հանրագիտակի Տէր-Տնօրէնին հետ, իրենց չուրջը կը հաւաքեն խմբագրական

ոյժ մը՝ որ ամէն քննադատութեան փորձերու ճակատաբայ կ'ընդդիմակալէ, և թերթին նիւթական թէ՛ բարոյական՝ ինչպէս ամէն հրատարակութեանց՝ բուն հոգին ու կամքը կազմող պէտքերն արդէն ունին ու կ'հոգան անձամբ անձին, ըսել է Հանրագիտակի սկիզբէն ցարդ փափաքելի եղած յարատեւ հրատարակութիւնն այլ եւս ամէն տեսակէտով երիցս երաշխաւորեալ, գնահատելի ու քաջալերելի է: Եւ ուրախաւիթ նորալուր մ'է նաեւ անշուշտ մեր ամեն կողմի բազմաթիւ Բարեկամներուն, Ուսանողներուն և համակիր Ընթերցողներուն համար: Նորաչուք Հանրագիտակի հրատարակութիւնն երաշխաւորեալ և յատուկութիւնն անընդհատօրէն շարունակելի և օր ըստ օրէ, ալ աւելի կատարելագործելի վիճակին հասցնելու մեր այս փորձառական ու հանրութեան օգտակար հանգիստանալու յատուկ ու պատուաբեր նարգադրութիւնը:

ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ



### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԻՆ

Այսօրէն սկսեալ կը ձեռնարկենք հրատարակել Հանրագիտակը, եւ սրտի ամենամեծ գոհունակութեամբ կ'աւետենք զայն մեր հին թէ նոր բարեկամներուն և ընթերցողներուն: Բուրասան Մանկանցի հրատարակութեան բոլորած տարիներու երկար շարքն եւ գտած քաջալերութիւնը ցարդ մեզ անտարբեր չէին թողած, և շատ առիթներով մտադրած էինք զայն շարունակել, սակայն զանազան պարագաներ միշտ խոչընդոտն եղած էին մեր սոյն փափաքին իրագործման: Այսօր բոլորովին հաստատ հիմքու վրայ խարսխուած, թարմութեամբ զօրացած կը ներկայանանք և կը ներկայացնենք մեր հին թէ նոր ընթերցողաց իբրեւ նոր փիւնիկ մը, հինէն աւելի ճոխ, ընդարձակ, գեղեցիկ նիւթերով զարդարուած և միանգամայն մեծին ու փոքրին օգտակար լինելու ջանքով:

Այստեղ չենք ուզեր մեծ մեծ խոստումներ ընել մեր ընթերցողներուն որոց արդէն վաղուց ծանօթ ենք մեր համեստ գործունէութեամբ ու գործառնութիւններով:

այլ միայն պարզ ու անկեղծ սրտով կը յայտարարենք թէ՛ որքան մեր հանդէս քաջաբերութիւն գտնէ Պատրիս, Հասարակութեան կողմանէ, նոյնքան ալ աւելի մեր ճիգեր կը կրկնապատկուին, որով կրնանք Հանրագիտական աւելի ընդարձակել, ճոխացնել եւ շարժականի վերածել, գնոյն վրայ յաւելում մը չընելէ զատ՝ բացառիկ նուէրներ ալ տալ՝ ինչպէս ըրինք ԲՈՒՐԱՍԱՆԻ օրով:

Հրաւէր կը կարդանք ապա մեր ԲՈՒՐԱՍԱՆԻ հին և պատանի ազնիւ ընթերցողաց, որոցմէ շատերն այսօր կատարեալ երիտասարդներ, գործի և գրչի տէր, արուեստաւոր և վաճառական, շատ առիթներու մէջ համակրութեամբ կը յիշեն անշուշտ իրենց պատանեկութեան զուարճալի ու իմաստուն ընկեր ԲՈՒՐԱՍԱՆԻ: Կը խնդրենք որ նոյն աչքով նային Հանրագիտակի, զոր հրատարակել ստանձնած եմք, մեր նախորդ ԲՈՒՐԱՍԱՆԻ աւելի գերազանց ու հանրագումար հանդիսացնելու համար, օր քան զօր մեղ ընծայուած քաջալերութեանց և մեր հրատարակչական բարենպաստի փափաքանաց համեմատ, շնորհիւ մեր Վեհափառ ԿԱՅՍԵՐ եւ մեր ընթերցասէր Հայ Ազգին:

ՆԵՍՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

#### ԳՈՐԾԱՌՆՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հանրագիտակի վերաբերեալ գրութիւնք, թղթակցութիւն և ո՛ր եւ է գործեր ու յանձնարարութիւններ յղուելու են Կ. Պոլիս, Էսկի Ջապթիէ ճատոէսի, թիւ 81, Նշան Կ. Պէրպէրեանի հասցէին, ըլլան անոնք մեզ թէ Արտոնատիրով վերաբերեալ:

Հանրագիտակի բոլոր նիւթական թէ դժբաժան գործառնութիւնք Նշան Պէրպէրեանի ձեռքով կը կատարուին:

Հանրագիտակի այս նոր շրջանը կ'սկսի 1901 Հոկտեմբեր ամիսէն: Կը հրատարակուի ամիսն երեք անգամ. պատկերազարդ, 16 մեծածաւալ երեսներով:

#### ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՏՆ Է ԿԱՆԽԻԿ

Պոլսոյ համար, Տարեկան (36 թիւ), 40 դահեկան. Վեցամսեայ (18 թիւ), 20 դահեկան. Եռամսեայ (9 թիւ), 11 դահեկան, Բօսթ Լօղալով իրենց բնակարանը յանձնելի:

Գաւառաց համար, Տարեկանը 45, վեցամսեան՝ 25, եռամսեան՝ 12½ դահեկան, թղթատարի ծախքը մեր վրայ:

Օտար Երկիրներու համար, Տարեկանը՝ 10 Փրանք, Վեցամսեան՝ հինգ Փրանք:

Ռուսիոյ համար, Տարեկան 4 ռուպլի, Վեցամսեան՝ 2 ռուպլի:

Ձեռք կը ծախուի, Մայրաքաղաքիս մէջ հատը 40 փարա, իսկ գաւառները՝ 50 փայ:

Հանրագիտակի 1901 Յունվար 1էն մինչեւ Սեպտեմբերի վերջ հրատարակուած թիւերն մէկ պրակի վերածուած՝ կը ծախուի գին՝ մէկ մէծիաի:

## ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ

Թոյլ տուք մանկտուրդ զալ առ իս  
ԵՐԾՈՒՍ



Այսպէս կը գոչէր Յիսուս երկու հազար տարի առաջ, Յայտնեալ կրօնքին, Աստուածաշունչ մարգարէներու, Առաքեալներու, Հայրապետներուն, Հաւատոյ Մայրաքաղաքին, Հրաշքներու և սքանչելագործութեանց Եհովաի նախասիրեալ Հայրենիքին մէջ՝ երբ հրէայ ձկնորսներ Ձեզ կը վռնտէին Յիսուսի ներկայութենէն ու անոր երկնաւաք Ուսուցչապետի ունիւրդութենէն: Նա շեխելով զանոնք ըսաւ թէ՛ հոս չուրջս Ժողոված մարդերէն և ոչ մէկը պիտի արժանանայ երկնքի Արքայութեան, մինչեւ որ այս մանուկներէն մէկուն պէս չըլլայ, եւ ինքն ալ՝ Աստուած ըլլալով հանդերձ, մանուկի կերպարանքով մարմին առած աշխարհ եկաւ: Ձեզ՝ մանուկներդ, այսքան սիրեց Յիսուս: Եւ դեռ ցայսօր, — մինչեւ ցյաւիտեան ալ — Յիսուսը՝ Ձեր մանուկ կերպարանքովն է որ իր կոյս Տիրամօր գիրկը դրած կը կախենք մեր սրբազան տաճարներու աւագ խորաններէն, որու ստիւղ, իր մարդեղացման և աշխարհի վերկազործութեան ի յիշատակ, Պատարադի Ս. Խորհուրդը կը կատարեն Ս. Հարք, և անոր մարմինն ու արիւնը՝ նշխարհքի ու մա-

սունքի գոյափոխեալ, մեզ կը բաշխեն մեր ռզիներն անոր հոգիով գոյափոխելու, կամ աշխարհիկ իմաստով՝ սապէս ըսենք. Աստուածային հակաեկեղծով մը մեր մեղքերու աղտերն և մոլութիւններու ախտերը սրբելու համար:

Եւ եթէ այն ատեն աստուածային մանուկ Յիսուս, Ձեզմէ շատերուն կամ մէկ քանիին պէս, ծիրանիները չըրաւ երբէք իրեն խանձարուր, և ապարանաց տեղ, անասուններու մուրի մը մարագն ընտրեց իրեն ծնարան, անոր համար էր անշուշտ որ՝ Սաղմոսին ըսածին պէս, մարդիկ որ ի պատուի էին, զայն չիմանալով ո՛չ միայն հաւասարած էին անասուններու եւ անբաններու ու անոնց նմանած, այլ և անոնցմէ՝ ալ ա՛յնքան ստորնացած էին, որ Յիսուս նախամեծար համարեց աւելի անասուններու գոմը քան մարդոց տունը իրեն մարդեղարան ընտրել: Ասով ալ, աղնի՞ւ ու սիրո՞ւն մանուկներ, բարոյականի սա մեծ դասը տուաւ թէ՛ մանուկի ծնունդն ու ծագումն որքան խոնարհ ու անչուք ըլլան, անոր մէջ նախախնամութեան կողմէ դրուած աստուածային մտքին ու հոգւոյն մեծութենէն կախում ունին՝ որ հիւղակի զաւակը որ մը ապարաններունը գերազանցէ:

Հասկցնելու համար ալ միանգամայն թէ տղքատն ու հարուստն առաջի Աստուծոյ հաւասար են, միայն թէ անոնց խելքի գերազանցութիւնն է որ թէ Աստուծոյ թէ մարդկան հաճելի և ուր ուրեմն արքայութեան արժանի կը հանդիսացնէ: Յիսուս իր առաջին օրհնութիւնը Ձեզ՝ մանուկներուդ, ընծայեց, զի ինչպէս կաթիլէ մ'է որ սկըսած է ովկէանը, ըոպպէէ մ'է որ սկսած է յաւիտենականութիւնը, ինչպէս հիւլէէ մը՝ տիեզերքը, նոյնպէս և մանուկէ մ'է որ կը ծնի մարդկութիւնը Ձեզ նման օրհնուած:

Դո՛ւք, սիրուն ու հանճարեղ մանուկներ, դո՛ւք պիտի շարունակէք մեզ, մեզի պիտի վերածաղկեցնէք, մեր կեանքի ցամբած լիճը պիտի լնուք, մեր չորցած ոսկորներէն դուք պիտի յարուցանէք մեր հոգիներ, նման աշունցած որթատունկի կոճղէն նորընձիւդ բարունակաց որք կը կազմեն այգեստանները, ու կը հովանաւորեն իրենց աճումնաճիգ սարփիւններով մեր ննջած յիշատակները: Դո՛ւք էք մեր լոյսերն ու յոյսերը: Ձեզ համար

է որ մայրեր կ'անցնեն իրենց գիշերներն անքուն, և հայրեր՝ կեանքի կռույն մէջ կը գիւցազնանան, կը նահատակուին: Մանուկնե՛ր, դուք մեր բոլոր լացերուն մէջ, արշալոյսի ծիծաղներն էք. մեր բոլոր տառապանքներուն մէջ, մեր մխիթարանքն էք: Դուք՝ իբրեւ զաւակ՝ յաջորդն ու պայազատն էք Ձեր ծնողաց, դուք, իբրեւ թոռներ, ձեր ծերունի պապերուն և պառաւ մամերուն նեցուկ-ցուպերն էք: Ինչպէս Աբաբ՝ Աստուծոյ առաջին շունչն ընծայ ընդունելով իր մարմին կաւն ու հողը հոգիի, մտքի վերածուեցաւ, որ բազմամարդեց տիեզերքն ու անոր տիրապետեց իր աստուածաշունչ տաղանդովն ու հանճարովը, նոյնպէս եւ դուք Յիսուսի առաջին օրհնութիւնը ձեզ պարգեւ ընդունելով, ձեր ծնողաց օրհնութիւնն է ձեր ուսուցիչներուն պատիւը պիտի ըլլաք:

Ուսուցիչը գաղափարի սերմնացանն է, կը հերկէ ձեր մտքի արտերը. սակայն դուք ալ ձեզ սիրող Յիսուսին առակի այն անդաստաններն ըլլաք, որ ապառաժուտէ եւ փշուտէ աւելի պարարտագոյն հողերն հանդիսացան, և, մէկի տեղ, բիւրապատիկ արդիւնքով վարձատրեցին իրենց իմացական թէ բնական ախօսներուն մէջ թափուած քրտինքն ու հարաւունք:

Յիսուս պարզապէս քարոզիչ վարդապետ մը, ուսուցիչ վարժապետ մը, անկեալ բարքերն ու վարքերը, մոլորեալ մտքերը, դայթակղեալ ու թերահաւատ հոգիները վերանորոգելու համար երկնքէն երկիր իջած աստուածափառ հրապարակախօս մ'էր. Ձեզ՝ մանուկներդ, մարդերէն աւելի նախապատուելով հասկցուց ձեզ թէ՛ Յիսուսի արժանի մանուկներ ըլլալու էք, այն Յիսուսին որ իր երկոտասանամեայ տարիքին մէջ՝ իր ժամանակի Փարիսեցի, Սադուկեցի դպիր-իմաստունները պապանձեցնելու չափ շուարեցնող ու հիացնող, հանճարեղ քարոզներ կը խօսէր: Դուք ալ ունենալու էք աստուածորդի մանուկ Յիսուսին վերանորոգիչ ու հրաշագործող հոգին ու օրհնութիւնը՝ որ ձեր վրայ կ'տարածի, ինչպէս Անոր հոգին ու օրհնութիւնը կը տարածուին դեռ մինչև այսօր Յաբեթի թոռանց թոռներուն վրայ:

Ահա՛ ձեր՝ մանուկներուդ, համար տարիներ առաջ և տարիներով հրատարակած մեր

ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑԻ շարունակութիւնը ՀՆԱՐԱԳԻՏԱԿԻ մէջ յարատեւել վերստին սկսած ենք: Ներկայ թէ անցեալ ժամանակին գիտական, կրթական և մանուկներու դաստիարակութեան յատուկ, հրահանգիչ, բարոյացուցիչ մեր նորանոր հրատարակութիւնները, որք կարող են և պիտի ըլլան ձեր մտքերը, ձեր հոգիները նորանոր ճիգերով, նորանոր բոլորանուէր գոհողութիւններով ձոխացնել:

Ձեզ կը մնայ ուրեմն, ո՞ մանուկներ, և մանաւանդ՝ ո՞ ծնողներ, օգտուիլ այս առիթէն ու պատեհէն, որով ձեր զաւակներ պիտի կարողանան ոչ միայն արդարացնել թէ իրաւամբ արժանի են իրենք Յիսուսի անդրանիկ օրհնութիւններուն, այլ և ձեր որդեսիրական խեղճներուն և մեր խմբագրական վստիքներուն, որոյ ներկայացուցիչն է և այսօր Հանրագիտակ՝ նման երբեմնի Բուրաստանին, որ պիտի ըլլայ ձեր՝ մանուկներուդ, իմացական ու բարոյական զարգացման Աւետարանն ու վարդապետականն եւ Ձեր ծնողաց ալ Նոր Ընթերցարանն, որուն պէտքն զգալի է միշտ:

Ազնիւ ու իմաստուն մանուկներ, ատեն է որ ձեր անձնական զարգացման գերազանց ըլլալը հաստատելով ապացուցանէք թէ՛ իրաւ է իմաստունին ըսածը, թէ կան մարդիկ որ դեռ մանուկ են, և կան մանուկներ որք արդէն մարդ են:



#### Ծ Ն Ա Փ Ո Ղ Ը

Փրանսուա՝ աղքատայրի մը զաւակ էր, Պրէօն գիւղին մէջ: Ձայնը խիստ գեղեցիկ ըլլալուն, քաղաքին եկեղեցւոյն երաժշտապետը գինք տիրացու կարգեց: Փրանսուա սկսաւ եռանդով աշխատիլ: Օրուան մեծագոյն մասն ասով կ'անցնէր և իրիկուան լատիներէնի դասեր կուտար, որոց հպսոյթը իր ապրուստին կը բաւէր: Իր խելքով ու անխոնջ հաշիւատութեամբ շփոթ առնէն փաստաբան եղաւ և նահանգին կառավարիչին քով մտաւ՝ իբրեւ քարտուղար:

Նոր քարտուղարն որ խիստ կարող մարդ մըն էր, կրնար յուսալ որ աւելի բարձր

պաշտօնի մը կը հասնի և կ'ամուսնանայ կառավարիչին էմիլիա աղջկան հետ. որովհետեւ կառավարիչն զայն իր սեղանը և ընտանիքին մէջ կ'ընդունէր:

Օր մը, քաղաքին մեծ տօնավաճառը սկսած ըլլալուն, պատկառելի ծերունի մը որ Ֆրանսուաի գիւղէն էր և գինքը լաւ կը ճանչնար, քարտուղարին տունն եկաւ եւ անոր ըսաւ.

« Պարո՛ն, մայրերնիդ հիւանդ է, աղտոյնց ինծի որ գամ ձեզ գտնեմ և իրեն համար օգնութիւն խնդրեմ »:

Ֆրանսուա 20 դրամնոց մը տուաւ, և, գրելի է սրտնեղութեամբ, ըսաւ. « Ա՛ռ աս »:

Նոյն օրը, կերակուրէն ետքը կառավարիչին ամբողջ ընտանիքը մեծ հրապարակը գնաց, տօնավաճառը տեսնելու իրենց հաւնածնին առնելու համար: Ֆրանսուա որ անոնց հետ էր, ծովափովուրէ գեղեցիկ ծխափող մը տեսաւ, հաւնեցաւ և 1 ոսկիի գնեց:

Էմիլիա, որ որքան գեղեցիկ նոյնքան ալ ազնուասիրտ էր, գիտէր որ Ֆրանսուա առտուն քսան դահեկան ղրկեր էր իր մօր թէ և գաղտուկէն կը սիրէր զայն, սակայն նեղացաւ, տեսնելով որ ոչինչ բանի մը համար հինգ անգամ աւելի դրամ կը ծախսէ:

Հօրն ըսաւ այս բանը. կառավարիչը շատ բարկացաւ. « Ա՛լ վստահութիւն չեմ կրնար ունենալ, ըսաւ, այսպիսի մէկուն վրայ որ, թէեւ կարող՝ բայց չի գիտար խեղճ ու հիւանդ մօրը և այդքան արժէք կուտայ իր քրահաճոյք գոհացնելու համար »:

Այն օրէն սկսեալ Ֆրանսուաի վարկը կոտրեցաւ, փոխանակ խորհրդականի պաշտօնին հասնելու, որու կը յուսար, հազիւ կրցաւ գիւղի մը մէջ գործի մը մտնել եւ անկէց ետք իր խօսքն անգամ ընող չեղաւ:



#### ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՈՒ ԱՊԵՐԱՆՏՈՒԹԻՒՆ

##### Սիրելի՛ որդեակ,

Ահա՛ քեզի կենդանի օրինակ մը՝ քու անցեալ օրուան ցցուցած վարմունքիդ. փոխարէն: Օրիորդ Հռիփսիմէ, որ չքաւոր ու աղքատ ընտանիքի մը զաւակն է, իր երախտագիտութիւնը յայտնել կուգայ Տի-

յին Եւգինէի, որ ձմեռը մօտեցած ըլլալուն՝ վեհանձնօրէն իր աղջկան մէկ ձեռք հագուստը նուիրած էր Հռիփսիմէի: Դողդոջուն քայլերով ու արցունքոտ աչքերով կը ներկայանայ ազնուասիրտ տիկնոջ: Թէ՛ իր, թէ՛ ծնողքին երախտագիտութիւնն ու շնորհակալութիւնը կը յայտնէ: Տիկին Եւգինէ՝ սիրով կ'ընդունի զինքն ու զանազան հարցումներ կ'ընէ, անոր ուսման և դաստիարակութեան մասին:

Ֆոքըր ծառայութիւնը չես ուզեր կատարել: Այսպէ՞ս կը վարուիս քեզ բարիք ընողին հետ. ամէցի՛ր աղքատ աղջիկէ մը որ քեզնէ շատ աւելի արհեստագործեամբ կը վարուի: Շատ յանցանքներուդ ու պակասութիւններուդ աչք կը գոցեմ, շատերուն դիւրաւ թողութիւն կուտամ, բայց բնաւ չեմ ներեր երբ արհեստագործիւն կ'ընես. այսպիսի դարչելի մոլութեան մը դէմ քեզ



րակութեան մասին, կը վստահացնէ Հռիփսիմէն թէ՛ իր հոգածութեան աւարկայ եղած է, և միշտ ուրախ պիտի ըլլայ, զինք այսպէս բարի ու առաքինի տեսնելով:

Իսկ դո՛ւ, որ ոչ կարօտ ես և ոչ աղքատ, բոլորովին ապերախտ կը գտնուիս քու աղնիւ հօրեղբորդ դէմ, որ անցեալ շաբաթ գեղեցիկ ժամացոյց մը պարգեւ տրուած էր, և դուն այսօր իրեն խնդրած մէկ

պիտի ղգուշացնեմ և պէտք եղածին պէս պիտի յանդիմանեմ: Աշխարհիս վրայ ապերախտէն աւելի նախատուելու արժանի մարդ չկրնար ըլլալ. երբ մէկն ա՛յն աստիճան վատութեան կը հասնի որ ընդունած բարերարութիւնը մոռնալէն զատ՝ ձեռքէն եկած բարիքն ալ կը զլանայ իրեն բարիք ընողին. եւ կամ, ինչ որ ամէնէն գէշն պիտի ըլլար՝ ընդունած բարիքներուն տեղ

չարիք կը հատուցանէ, որով թէ՛ մարդ-  
կութեան և թէ՛ Աստուծոյ առջեւ դատա-  
պարտելի է:

Ընդունած բարիքը մոռցողն, իր պա-  
տիւնն դէմ կը մեղանչէ. կարող եղած ա-  
տեն հատուցում չընողն՝ արդարութեան  
դէմ կը գործէ:

Երախտագիտութիւնը սրբազան պարտք  
մ'է, զոր ամէն մարդ հատուցանել ջանա-  
լու է: Եւ թէպէտ շատերն այս առա-  
քինութիւն չեն ունենար, բայց և այնպէս  
բարիք մը ըրած լինելուդ փոխարէն չարիք  
ալ չեն հասցներ:



## Ի ՂԶԵՐԳ ՄԱՆԿԱՆՑ

Պատենք զԱստուած մեր հարց հարանց,  
Որոց շնորհեց երկնուս զանանց  
Ջարփալութիւն իւր զօրութիւն  
Ու սեղանոյն մեր լիութիւն:

Յե՛ս Աստուծոյն չափ մեր ծնողաց,  
Օրհնենք զՊԲՔԱՅՆ մեր՝ գլխաբաց,  
Թող նանանչէ փառքին արեւ  
Մեր ամենուս գլխուն վերեւ:

Մեր հարց ու մարց ծառոյն կողքէն  
Բուսած ճիւղեր ազնուօրէն,  
Անոնց արիւնն է խոխոջէ,  
Մեր երակաց առուոյն միջէ:

Սնած անոնց կաթին մեղրով՝  
Պարսինք իրենց շաւ սեր, զորով:  
Ծլինք, ծաղկինք, զանգ պտուղներ  
Անոնց ոյց սերն է մեզ ծներ:

Սիրենք մեր ծնողքն ու մեր մեծեր  
Ըլլան անոնք հիւանդ քէ ծեր.  
Ըլլան հարուս, ըլլան ճանկ,  
Իրենց պատուոյն զո՞հ մեր հուսկ դանկ:

Օժտեալ անոնց ձիւրովն քնիւր,  
Անոնց փառքին նախանձխրնդիր,  
Լինինք անոնց յիշատակին  
ձերմակ երես պարծանքն անգին:

ձիւղն ենք այսօր, վաղը նոր ծառ,  
Հասած նոր նոր շողով, պայծառ.

Լուսով ժպտուն մեր շուրհին զալ  
Հե՛տ քող հանգչի հարց յիշատակ:


Ու մեր ծոցէն ալ նորալոյս  
Սուրբ ապառնույն քող ծաղկեալ յոյս  
Նորաբողբոջ վերնմանդէ  
Զերծ ու փարատ խօլ երկիւղէ:

Թէ մեզ սիրեց մանուկն Յիսուս  
Փրկիչ խաչն ալ շաղկեց իր ուս  
Որ մեր կեանքին ցեց ճառապանք  
Ընենք ընդ միտ մեր սփոփանք:

Աշակերտացն ալ նմանակ՝  
Մեր համոզմանց սուրբ հանգանակ,  
Հոգւոյն Սրբոյ սիրովն անկեղծ  
Պահենք ամեն տեղ անսխեղծ:

Միտ մեր ծնողացն ըլլանք հրեւանք,  
Ուսմունքն ըլլանք մեր խրախճանք.  
Իրկուն առնու մեր երգն ըլլայ  
Աղօթքն Հասցինք ալելուհայ:

Ապրինք կեանքը, քկեանքն արդարի,  
Մեծնանք մարդը, մարդը բարի,  
Քաղաքացին առաքինի  
Որ ճամարիս հայ կը լինի:



## Ո Ս Կ Ի Ն

Երկու եղբայրներ, Կարապետ ու Յակոբ,  
Ծովէն անցեր և հեռաւոր երկիր մը դացեր  
էին առակ շահելու համար:

Կարապետ քիչ մը դրամով անմշակ հող  
մը գնեց և սկսաւ ամենամեծ եռանդով հեր-  
կել. այնքան աշխատեցաւ որ քիչ ատենէն  
առատ ցորեն ու գարի ունեցաւ:

Յակոբ լեռը գնաց, գետերու աւաղին մէջ  
ոսկիի փոշի փնտռելու համար. բայց չբա-  
ւոր կեանք մը կը վարէր հոն. որովհետեւ,  
ծառերուն արմատէն ու կեղեւէն զատ ուրիշ  
ուտելիք չունէր: Վերջապէս եղբօրը քով  
վերադարձաւ՝ տոպրակ մը ոսկիի փոշի ու-  
նենալով հետը:

«Նայէ՛, եղբայր իմ, ըսաւ, բախտս ի՞նչ-  
պէս բանեցաւ. այս ոսկին ամբողջ իմս է:  
Միայն թէ ինձ ուտելիք տուր, վասն զի  
չափազանց յոգնած ու անօթի եմ:

— Կա՛ւ, պատասխանեց Կարապետ, քեզ

ուտելիք կուտամ, բայց տուած հացիս ծանրութեամբ ոսկի պէտք է տաս ինծի :

Թէեւ այս սակարկութիւնը բնաւ Յակոբի գործին չեկաւ, սակայն պարտաւորեցաւ ընդունիլ, որովհետեւ խեղճ տղան յոգնած և տկար ըլլալուն՝ չէր կրնար աւելի հեռուն երթալ :

Քանի մը օրէն՝ կարապետ եղբօրն ամբողջ ոսկին առաւ : Այն ժամանակ ըսաւ անոր .

« Սիրելի՛ եղբայրս, գանձդ քեզ կը դարձնեմ, ես անխիղճ չեմ և քու հարստութեանդ աչք չունիմ : Միայն՝ ուղեցի ցունեկ քեզ ու ոսկին մեզի երջանիկ չընելու և թէ աշխատութեան ունիւն անկէ շատ աղէկ է :



Փ Ո Ւ Ր Ի Լ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍԿԻՋԲԷՆ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐ

Հ Ի Ն : Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Գ Լ Ո Ւ Խ Ա .


Ս Կ Ի Ջ Բ Է Ն Ե Ր Ը

Մարդիկ եւ մարդկային ցեղերը : — Ե՞րբ երեւցաւ մարդն երկրի վրայ : Երկրի կազմակերպութեան չորրորդ շրջանին կամ երկրաբանական թուականին վերաբերող հոգային խաւերուն մէջ գտնուած կայծքաբէ եւ ոսկերոտիներէ շինուած կացիներ, դանակներ, նետերու և նիզակներու սլաքներ, որոնք անդրջրհեղեղեան բնակութեան յայտնի մնացորդներն են, անհետացած կենդանիներու պատկերներ ներկայացնող նկարներ, վերջապէս մարդկային բեկորներ կ'ապացուցանեն թէ՛ մարդը կ'ապրէր այնպիսի ժամանակ մը ուր մեր ցամաք երկիրը տակաւին չունէր ո՛չ հիմակուան արտաքին երեւոյթը, ո՛չ այսօրուան կլիման, ո՛չ հիմակուան կենդանիներու և բոյսերու որոշ տեսակները :

Արարչութեան ապագայ թագաւորը՝ վայրի ու խղճալի կեանք մը կը վարէր : Քարի դար կոչուած է այս ժամանակամիջոցը՝ ուր

մարդիկ կ'սկսին քարերը կոշտ ու տճեւ կերպով տաշել և անոնցմով ընտանի գործիներ կամ գէնքեր շինել, և քարայրները իբրեւ իրենց բնակարան գործածել . մինչեւ որ կը յաջողին կամաց կամաց քարերը քիչ շատ ճարտարութեամբ բանիլ, շինել հողէ ամաններ, ցիցերու վրայ հաստատուած լնաճեմ բնակարաններ կառուցանել, տղիւն, մանկիւր կոչուած խոշոր քարերը կանգնել : Առաջին մարդն անորոշ ու ահաւոր հնութեան մէջ անծանօթ կը մնայ :

Բոլոր մարդիկ ջուխտէ մը առաջ եկած կ'երեւին . բայց բնախօսութիւնն ու լեզ-



Քարէ կացին մը

ուաբանութիւնը մարդկային սեռի զանազանութիւններուն մէջ մեծ տարբերութիւն ի վեր կը հանեն, նա մասնաւոր ծանօթ ցեղերուն մէջ . ճերմակ կամ հնդկաւերոպական գեղին՝ Ասիոյ հիւսիսային եւ արեւելեան կողմը, սեւ՝ Ասիոյ կիսի և Աւստրալիոյ մէջ . կարմիր՝ Ամերիկայի մէջ :

Սեւ և կարմիր ցեղերը գրաւոր յիշատակարան թողած չեն . դեղին ցեղն ինքնակառու զրած է աշխարհի ամենահին տարբերութիւնները . ինչպէս են Չինացիներուն որք Մոնկոններուն հետ՝ ամենածանօթ ներկայացուցիչն են այս խումբին՝ որոնք կը վերաբերին նաեւ Հնդկա-Չինի ժողովուրդները, Տիպեդցիներ, Չինաստանի արեւելեան կողմէն մինչեւ Կովկաս տարածուող

Տորգ կամ Թուրք, եւ Թաթար կամ Տատայր կամ Այրարատ աղգեր:

Այս ցեղին ազգականացած էին Ատտիղասի Հոները. Թերւս Հունգարացիներն ալ հետեւապէս Հուգարիա եւ անոր հետ Աւստրիա բնական բարեկամն ու պաշտպանն են միշտ մեր Թուրքիոյ անկախութեան ու ամբողջութեան:

Ճերմակ ցեղը. Արիակամն եւ Սեմեանն. — Ճերմակ ցեղը կը բաժնուի երկու գլխաւոր ընտանիքի. Սեմեանք՝ Ասիոյ հարաւարեւմուտքի եւ հիւսիսահարաւմուտքի մէջ. Արիա-

որուն Սերունդներն են Կեղտերէնը, Գերմաներէնը, Սլաւերէնը:

Այս ցեղերուն մէջ, ընտանիքն է հասարակութեան հիմը: Միացեալ ընտանիքներ կը կազմէին ցեղը, բազմաթիւ ցեղեր՝ ժողովուրդը: Ասոնք բոլոր աստուածներէն վեր գերազոյն Աստուծոյ մը զգացումն ունէին, բայց այս վարդապետութիւն մթնցած էր բնական ուժերուն աստուածացումովը:

Տիգրիսի, Միջերկրականի եւ Կարմիր ծովու կողմերն հաստատուած Սեմեաններ միեւնոյն ծագումն ունէին: Աստուածաշունչն



Լիճի վրայ շինուած նախապատմական բնակարան

կանները կամ Հնտ-Եւրոպականները՝ արեւմտեան Ասիոյ ֆնացեալ մասին եւ Եւրոպայի մէջ: Արեւելքի մէջ՝ Հնդիկներու, Մարաց կամ Մէդաց, Պարսիկներու, Պարթեւներու եւ Հայոց՝ իրարու հետ. Փոքր Ասիոյ մէջ՝ Պեղասգներուն՝ Հելլէնաց հետ. Յունաստանն ու Իտալիան, Սեւ ծովու, Պալքանաց ու Ալպեաններու հիւսիսային կողմը՝ Կեղտերուն, Գերմաններուն եւ Սլաւներուն իրարու հետ՝ ունեցած ազգակցութիւնն հաստատուած է ցեղային լեզուներու միջոցաւ: Յունարէնն ու Լատիներէնն երկու քոյր լեզուներ են. ծագելով նախնական լեզուէ մը՝ որմէ առաջ եկան նաեւ Պարսից Զէնտերէնը, Հընդիկ Պրահմաններու Սանսքրիտերէնը, եւ

Աբրահամէն կը սերեցնէ Արաբներն ինչպէս Հրէաները: Սեմական գաղթականութիւններ բնակեցան Ափրիկէի հիւսիսային կողմը մինչեւ Ճիպրալթար: Այս ցեղին քով պահպանուեցաւ միակ Աստուծոյն վարդապետութիւնը: Այսպէս ճերմակ ժողովուրդներու երկու մեծ հոսանքներ արեւելքէն արեւմուտք քալեցին սկսելով Ասիոյ կեդրոնէն, դէպ այս մեծ ցամաքին արեւմտեան կողմեր, դէպի Ափրիկէի հիւսիսակողմ եւ Եւրոպան ամբողջ:

(Շար)



## ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՔ

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ԴԱՍ.Ա.

Դաստիարակութիւնը նազիկն երեք  
կարողութիւններն հաւասարապէս  
ժշակելու է. ըսինք:

Դաստիարակութիւնը մարդս իր բնական վիճակին մէջ առնելով՝ զայն լիովին ինքն իր տէքը ընելու աստիճան բարձրացնելէ վերջ, և որչափ որ կարելի է՝ իր այդ բարձր դիրքին մէջ հաստատուն պահելով հանդերձ երբ պարտաւոր կ'ըլլայ թողուլ որանոր վերայ ներգործեն սովորութիւնները, ինչ որ մարդկային բնութեան օրէնքն է, ջանալու է որ այդ սովորութիւնները՝ որչափ որ կարելի է, ամենալաւագոյններն և ամենէն ազնուագոյններն ըլլան:

Զգայնութիւնն ունի նախ իր բնագոյումներ, որոնք իր սրտի առաջին պէտքերն են, օրինակի համար. միտումները, հակումները որ ամէն խորհրդածութենէ առաջ ծնունդ կ'առնեն մարդուն մէջ, և որոնք մէջ կամքը չի մասնակցիր: Զգայնութիւնը յետոյ խորհրդածեալ, գիտակից երեւում մը կ'առնէ, այն է բուն յուզումներն (émotions) և զգացումներն որոնց վրայ որոշ գաղափար մը կ'ունենանք, եւ սրտին մարդկօրէն ճշմարտապէս կեանքն ալ Զգայնութեան այդ երեւումին մէջ կը կայանայ: Զգայնութիւնը ունի վերջապէս սովորութեանց նմանող երեւումը, կիրքերու երեւումն է այն, Այսինքն ստացուած պէտքերու եւ փափաքներու երեւումը, որոնք փորձառութիւններու և պարագաներու ձեռքով չափէ աւելի ընդարձակուած ու առաջ գացած են: Պարագաներու բերումով, մենք կ'ունենանք այն ատեն անասնական և անասնականէն ալ աւելի վատթար կեանք մը, եթէ ստորին ու յոռի կրքերու լուծին տակ իյնանք, և գերազանց կեանք մը՝ եթէ ջերմ սիրով հետամուտ ըլլանք ամենաճշմարիտ բարիքներուն:

Իմացականութիւնն ալ վերջապէս կ'ընծայէ երեք նմանօրինակ երեւութիւններ: Ա-

սոնք են՝ նախ մտքին անխորհրդածեալ բնագոյումները, մեր մտածող բնութեան առաջին յայտարարներն ու առաջին պէտքերը, Բանը (raison), այսինքն ժողովրդական լեզուով խելք կամ խելահասութիւն կոչուած հոգեկան կարողութիւնը՝ մարդկային իմացականութեան մէջ հազորդութիւն կ'ունենայ գործունէութեան, չարժման մէջ եղող բնագոյումին հետ: Բանին սկզբունքները մեզ կ'արգիլեն անբանաւոր վարմունքներու կամ զառաժանքի մէջ իյնալէ և բարին չարէն որոշել կուտան. կարելի է զանոնք մտքի հիմնական բնագոյումները կոչել: Տարիքին հետ կ'սկսի մտքին խորհրդածեալ ու գիտակից կեանքը. այն ատեն է որ կը կատարուին այն զանազան ու տարբեր գործողութիւններ որք միասնօրէն կ'աշխատակցին մեր ծանօթութիւններու ստացման (acquisition) և մտային որոնացումին (élaboration) [\*]: Բոլոր այս մտային աշխատութիւնն է որով մեր ըմբռնումները կը քաղենք յստակօրէն, անոնցմէ զատելու, զտելու համար բուն ու վերացեալ նշաններ: Վերջապէս երբ իմացականութիւնն իրերու հետ յարաբերութեան, հազորդակցութեան մէջ կը մտնէ, մտածելու ինչ ինչ սովորութիւններուն մէջ հաստատուի կը ձգտի. յիշողութիւնները, գաղափարներու զուգորդութիւններն ուրիշ բան չեն:

Նգրակացութիւն. — Մէկ խօսքով՝ այս պիտի ըլլայ մեր հետեւելիք ճամբան. ասոնք են այն կարողութիւնները զորս կարգաւ պիտի ուսումնասիրենք ու սորվինք զաստիարակութեան տեսակէտով: Դաստիարակութիւնը, նորէն կ'ըսենք. իրեն առարկայ ունի բարձրացնել մարդը՝ կարելի կատարելութեան մը ամենաբարձր աստիճանին, իր ազդեցութիւնը ներգործելով անոնցմէ իւրաքանչիւրին վրայ, և իւրաքանչիւրին միջոցաւ ամենուն վրայ առհասարակ: Իր գործն է մանուկը բնական և կիսովին գրեթէ ա-

(\*) Մտային որոնում (élaborations) ըսելով կը հասկնանք աշխատանքով ձեւափոխութեան ենթարկուելու գործողութիւնը: Ծանօթութեան որոնում (élaborations des connaissances) ըսելով կը հասկնանք մտքին նախնական տուեալները՝ օրինակի համար՝ զգացողութիւնները իմացականութեան գործողութիւններու միջոցաւ, բուն մտածումներու ձեւափոխուելու գործողութիւնը:

նասնական կեանքէն անցնել գիտակից եւ լիովին մարդկային կեանքը, բարձրացնել զայն բարիքին սովորութեան մէջ հաստատուն կերպով փնտրել ամենէ աւելի ապահով դիրքի մը վրայ, այնպէս որ մի գուցէ դատապարտուի մի եւ նոյն օրէնքով վերստին անասնական վատթար վիճակի մէջ իյնալու եւ գերի ըլլալու երկրորդ բնութեան մը՝ որ առաջինէն աւելի բռնաւորական եւ աւելի անպահանջալ է:

ԳՍՍԲ.

### ՆԿԱՐԱԳԻՐԸ (Caractère)

Թե ի՞նչ է նկարագիրը. — Նկարագիր բառին երեք իմաստներ. — Լայն իմաստ. — Անցուկ իմաստ. — Ցասուկ իմաստ. — Նկարագիրն ու միջքը. — Բնեղականը (naturel). — Բուն դաստիարակութիւնը (l'éducation proprement dite) եւ կրթութիւնը (l'instruction) — Առաջին բանաձև (thèse) քե « կրթութեանն ակնկալելու է ամեն բան, նոյն իսկ եւ մանաւանդ առաջդիմութեան զարգացումը »: — Հակաձև կամ հակաբանաձև (antithèse) քե « կրթութեանն սպասելու չէ մարդկային բարոյականութեան նպատակն ու եւ է բան »: — Այս հակաձևին պատշաճ առարկութիւնք է. Սթենսերի. — Առարկութիւնք ի յետագուցի (à posteriori). առարկութիւնք ի յառաջագուցի (à priori). — Հաւանութիւն. Հերբուս. — Կրթութեան բարոյական օգտակարութիւնը, որ նախ կ'անցնէ առանձնական բարոյականը. երկրորդ՝ կը բարեխաբէ բնկերութիւնը. երրորդ՝ կրօնքին հետ ունեցած առնչութիւնները:

Հանրի Մարիոն, ի պէտս դաստիարակութեան եւ ի պէտս մանկավարժ ուսուցչաց եւ ուսուցչուհեաց՝ իբրեւ ժամանակակից մանկավարժութեան պատշաճագոյն դաս ու դասագիրք՝ հեղինակած ու իմաստասիրած հոգեբանական մատենին մէջ՝ նկատելով թէ՛ դաստիարակութիւնը, կրթութիւնը եւ նկարագիր բառերը մանկավարժական գիտութեան մէջ շարունակ կը գործածուին՝ մանաւանդ նկարագիր բառը. մտածելով ալ որ դաստիարակութեան ա-

ռարկան է հապէս նկարագիրը կազմել. եւ թէ շատերը կարգ մը չփոթ իմաստներ տրուած են այս բառերուն, օրինակի համար՝ դաստիարակութիւնը եւ կրթութիւնը բառերը երբեմն իրարու հոմանիշ եւ երբեմն ալ իրարու հակառիշ մտօք գործածուած են, իմաստուն կերպով մը կը ճշդէ անոնց բուն նշանակութիւնները, եւ միանգամ ընդ միշտ կ'որոշէ այն գաղափարներն որք կը հասկցուին անոնցմով. լուծելով դարձեալ ժամանակակից իմաստուններու մէջ ծագած այն վէճը թէ՛ կրթութիւնը բարձրու կամ բարոյականի վրայ ազդեցութիւն չունի, ինչպէս պնդած է Սթենսէր, եւ Մարիոն զօրեղապէս հակառակը հաստատած է թէ կրթութիւնը ամէն ինչ է, ի նպատակ բարձրու բարեխառնութեան եւ բարոյականի զարգացման:

Թե ի՞նչ ըսել է նկարագիր. — Այս բառն ունի առ նուազն երեք իմաստ, բաւական որոշ, բայց լոկ ընդարձակման աստիճանով կը զանազանուին: Ա. իմաստ մը խիստ ընդհանուր, շատ լայն, չափազանց լայն. — Բ. իմաստ մը խիստ որոշեալ, չափազանց անձուկ. — Գ. իմաստ մը խառն, միանգամայն լայն եւ աղէկ մը որոշեալ, որ մեզ համար բուն յատուկ իմաստն է:


Լայն իմաստ. — Նկարագիրը՝ իր ամէնէն լայն իմաստով՝ ո՛ր է է անհատի մը համար, իր կեանքին որոշեալ մէկ ատենին մէջ երեք՝ կարողութիւններու ամբողջութիւնն է. այսինքն ինչ որ ունի կամք ըսուածէն (կամենալու ազդեցողութիւն մէկ կողմէն, կամենալու յատկութիւն կամ ուղղութիւն միւս կողմէն). ինչ որ ունի զգայնութիւն ըսուածէն (նմանապէս զգածական ազդեցողութեան [énergie] եւ զգածումներու ուղղութեան կրկին տեսակէտով), ինչ որ վերջապէս ունի իմացականութեան եւ գիտնալու կարողութիւն ըսուածէն. դատելու եւ մտածելու իր կերպերը, նկարագրերու հեղինակ Լա Պրիւէրի համար՝ այս բառն իր ամէնէն աւելի ընդհանուր ու ամենալայն իմաստն ունի. կը գործածուի նշանակելու համար ոչ միայն հոգիին երեք մեծ կարողութիւնները այլ եւ անոնց պատահական ամենափոքր փոփոխումները, եւ մինչեւ իսկ անոնց առած ծաղրական ձեւերն ալ: Նկարագիր բառին այս իմաստը խիստ լայն է,

և մանկավարժութեան մէջ գործածուածին միտքը չունի : Անցնինք ծայր աստիճան հակառակին :

Անձուկ իմաստ . — Նկարագիր, ըստ ըստուգաբանութեան, ըսել է նշանակ, որոշիչ նշան է : Արդ, ո՛ր և է անհատի մը ճշմարիտ նշանակը, ինչ որ ինքը ուրիշներէ կորոշէ նա մանաւանդ, իր կամքն է, ինչպէս կը թուի, ընելու և ուզելու իր սովորութիւնը : Եւ ալ իր կամքին մէջ, ինչ որ աւելի մասնաւորապէս կարեւոր և որոշիչ կերելի . կամենալու ազդուութիւնն է : Նկարագիր բառն այս իմաստով հոմանիշ է ազդուութեան, բարոյական կորովի ու հաստատուն կամքի : Նկարագիր ունենալ, երկաթի կամք ունենալ է, ցկարագիր մը ըլլալ՝ այնպիսի անձ մը ըլլալ է որ կամու ուրիշներէն չի վարուիր, այլոց առաջնորդութեան չի հետեւիր, գործելու մէջ մեծ նախաձեռնութիւն մը ունենալ, իր յատուկ կամքին աւելի կապուիլ, ապաւինիլ, և ի հարկին, ուրիշի կամքին քիչ ուշ կամ կարեւորութիւն ընծայել : Այս իմաստը թէեւ ամէն մարդու համար ճիշտ կրնայ ըլլալ, սակայն դաստիարակութեան տեսակէտով շատ և շատ անձուկ է : Որովհետեւ դաստիարակութեան նպատակն է չէ թէ միմիայն ազդեցիկ, կորովի կամքեր կաղմել, այլ նաեւ լուսաւորեալ մտքեր և լաւ կանոնաւորուած ու բարի սրտեր :

Բուն կամ յատուկ իմաստք, — Խառն իմաստով մը, որ, ըստ մեզ, բառին բուն իմաստն է, կ'ըսէ Հանրի Մարիոն, ո եւ Է անհասի մը յատուկ գործելու եւ զգալու բնական ու հաստատուն կերպն է : Գործունէութիւնը, որ միւս երկու հոգեկան կարողութիւններէն անբաժանելի է, զգայնութենէն ալ մասնաւորապէս անանջատելի է, և երբ մարդու մը, տղու մը նկարագրին նկատմամբ կը խօսուի, կը հասկնանք՝ ո և է պարագաներու մէջ՝ իրեն յատուկ որոշ կերպով մը վարուելու, գործելու, ներգործելու, յուզեալ լինելու կամ չլինելու բնական, սովորական իր կերպը :

(Շար.)



ԴԻՏԱԿԱՆ ՁԲՕՍԱՆՔ

ԴԱՐՁՈՂ ԳՆԴԱՍԵՂԸ

Առէք լատիկէ թել մը եւ պատկերին ցցուցածին պէս ծռած գնդասեղ մը անցուցէք . թելին ծայրերէն երկու մատով բռնելով ոլորեցէք, յետոյ ձեռքերնիդ իրարմէ հեռացուցէք, լատիկը ձգտելու համար :



Գնդասեղը խիստ արագ կը դառնայ՝ որով դաւաթի մը ձեւը կ'առնէ վայրկեան մը :

Գնդասեղը որչափ շատ լուսաւորուած ըլլայ, պատրանքը այնքան աղւոր կ'ըլլայ : Պատկերին մէջ, փորձը կատարողը չի տեսնուիր, մութ սենեակի մը մէջ է կեցած, և գնդասեղը բռնած է ծակէ մը եկած լոյսի ճառագայթին : Քիչ մը վարժութեամբ կարելի է ուրիշ շատ առարկաներ ալ ձեւացնել :





Ժ Ի Ի Լ Վ Է Ր Ն

Դ Ի Տ Ա Կ Ա Ն Վ Է Պ

Ժ Ի Ի Լ Վ Է Ր Ն

## ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

## ԴԵՊԻ ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

Ա .

1863 Մայիս 24ին կիրակի օր մը, ուսուցչապետ Լիտենպրօք աճապարանքով տուն կը դառնար, որ Համպուրիի հին թաղերէն մէկուն՝ Բէօնիկզկրասի մէջ 19 թիւը կը կրէր :

Մարթա սպասուհին կարծեց թէ շատ ուշ մնացեր է, որովհետեւ կերակուրը դեռ եփ ելած չէր :

« Աղէ՛կ, ըսի ինքնիրենս, եթէ հօրեղբայրս անօթի է, աղուոր փոթորիկ մը պիտի հանէ. այս մարդը համբերութեան ի՞նչ ըլլալը չգիտեր :

— Պ. Լիտենպրօքն է եկողը, հարցուց Մարթա՝ ապշած, ճաշասրահին դուռը կէս մը բանալով :

— Այո՛, Մարթա, բայց յանցանքը քուկոչէ եթէ կերակուրը եփած չէ, ժամը երկուքը չիկայ :

— Ինչո՞ւ համար ասանկ կանուխ տուն կը դառնայ կոր :

— Աս իրեն հարցնելու է :

— Ահա՛ եկաւ, ես կը փախչիմ, Պ. Ա.ը—

աէլ, դուք խօսք հասկացուցէք իրեն » :  
 Եւ Մարթա խոհանոց մտաւ : Մինակ մնացի : Ուսուցչապետներուն ամէնէն ցասկոտին խօսք հասկցնելը դիւրին բան չէ ինծի պէս վարանոտ բնավորութիւն ունեցող մէկու մը համար, ուստի կը պատրաստուէի վերի խնայելի քաջութիւն՝ երբ փողոցին դուռը բացուեցաւ, խողոր ոտքերու տակ սանդուղը ձռնչեց և վարպետը ճաշասրահէն անցնելով աշխատութեան սենեակը վազեց գնաց : Այս արագ անցքի միջոցին անկիւն մը նետելով կաղնեակէ գաւազանը, սեղանին վրայ դնելով, գլխարկը և եղբորդիին ուղղելով սա հրամանը .

« Աքսէլ, հետո եկուր » :

Դեռ տեղէն չարժեքով ժամանակ չունեցած՝ ուսուցչապետը անհամբեր ձայնով մը գոչեց . « Է՛ ուրեմն, տակաւին հո՞տ ես » :

Ահարկու վարպետի սենեակը վազեցի : Օթթօ Լիտէնպրօք չար մարդ մը չէր, բայց եթէ փոփոխութիւն մը չի կրէր՝ ինչ որ անհաւանական է, ամենէն արտառնոց մարդուն մորթին մէջ մեռնելու դատապարտուած էր : Եօհաննէօմի մէջ դասախօս էր և հանքարանութեան դասընթացք մը կ'ընէր, որու միջոցին կանոնաւորաբար մէկ երկու անգամ կը բարկանար . ո՛չ թէ յարատեւող աշակերտներ ունենալ ջանալով, կամ անոնց ըրած ուշադրութեան հոգ տանելով և կամ յաջողակ սաներ հասցնելու տենչով, ո՛չ, այս կէտերը բնաւ չէին զբաղեցնէր զայն : Ինք կը դասախօսէր « ենթակայօրէն », ինչպէս կ'ըսեն գերման փիլիսոփաները, իրեն համար և ո՛չ թէ ուրիշին : Եսպմու դիտուն մըն էր, գիտութեան հոր մը որու ճախարակը կը ձռնչէր՝ երբ քիչ մը բան քաշել ուզէին . մէկ խօսքով ագահ մըն էր :

Ասանկ քանի մը դասախօսներ կան Գերմանիոյ մէջ :

Դժբաղդաբար հօրեղբայրս արտասանութեան մասին մեծ դժուարութիւններ կը կրէր, մանաւանդ դասախօսութեան միջոցին, ինչ որ ցաւալի պակաս մըն է ուսուցչապետի մը համար : Արդարեւ, Եօհաննէօմի մէջ, ապացոյցներ տալու ժամանակ յանկարծ կանկ կ'առնէր, կը կուէր հետ բառի մը դէմ որ չէր ուզէր չորսունքներէն սահել : անանկ բառ մը, որ կ'ընդգիծմանայ, կ'ուռնանայ և հայհուէի մը ձեւին տակ դուրս կը

թռի : Ահա՛ բարկանալուն պատճառը այս էր :

Եկու տես որ հանքարանութեան մէջ ալ շատ կայ դժուարահնչիլ, կէս-լատիներէն կէս-յունարէն, խորատւորտ անուանումներ որոնք բանաստեղծի մը չըթուենք պիտի վիրաւորէին : Հեռի՛ ինչ այս գիտութեան վրայ գէշ խօսիլ, բայց սա բառերուն հանդիպած ժամանակ՝ տարանկիւնանիստ բիւրեղ, բէթինասֆալթ ռետին, կէլէնիթ, ֆանկագիթ, կապարի մօլիպտաթ, մանկանէզի թիւնկղթաթ և գիրքոնի թիթանիաթ, ո՞ր դիւրաթեք լեզուն չի յիսալիր :

Քաղաքին մէջ ամէն մարդ գիտէր հօրեղբորս այս ներքի պակասութիւնը և շարաշար կը գործածէր . ամէնէն դժուար կէտերուն մէջ ուշադրութիւն կ'ընէին, դասախօսը կը բարկանար և իրենք կը խնդային . ասիկա աղուոր բան մը չէր, նոյն իսկ գերմանացի մը համար : Եւ եթէ Լիտէնպրօքի դասընթացքին ամէնէն աւելի ունկնդիր գտնուէր, քանինե՛րը արդեօք կուգային դասախօսին աղուորիկ բարկութիւնովը դուրս ճանալու :

Ինչ որ ալ ըլլայ, հօրեղբայրս ճշմարիտ գիտուն մըն էր . թէեւ քարի նմոյշները գննած ժամանակ շատերը կը կոտորէր, բայց և այնպէս երկրաբանի հանձարին հետ հանքագէտի աչքն ալ ունէր : Մուրճովը, սրածայր պողպատովը, մագնիսացած ասեղովը, փողակովը և բորակական թթուի չիշովը զինուած՝ ամենազօրաւոր մարդ մըն էր : Հանածոյի մը տեսքին, կոտորուածքին, կարծրութեանը, հալումին, հնչականութեանը, հոտին, համին նայելով՝ անմիջապէս՝ գիտութեան ընդունած վեց հարիւր տեսակներուն մէջ կը դասակարգէր :

Ասով՝ Լիտէնպրօքի անունը նշանաւոր եղած էր բոլոր ժիմնապետներուն և գիտական ժողովներուն մէջ . Պ. Պ. Տավի, Հումպօլտ, և Ֆրանքլին ու Սապին հրամանատարները զանց չէին ըրած իրեն այցելութիւն մը տալու՝ Համպուրկէ անցած ատեն : Պ. Պ. Պէքըրէլ, Էպէլմէն, Պրիէսթէր, Ժ. Տիւմա, Միլն-Էտվարտս, Սէնթ-Քլէր-Տըվիլ, իր կարծիքը կը հարցնէին բնաւուծական ամէնէն խրթին կէտերուն վրայ : Խիստ կարեւոր դիւտերով հարստացուցած էր այս գիտութիւնը, և 1853ին՝ Լայպցիկի մէջ հրատարակած էր « Բարձրագոյն Բիւրեղագիտութեան

թիւն» անուն ահագին քառածալ հատոր մը, զատ տպուած տախտակներով հանդերձ, այլ սակայն ծախքը չկրցաւ հանել: Ասոր վրայ աւելցուցէք նաեւ թէ, Ռուսիոյ դեսպան Պ. Սթրիոճ իր հանքաբանական հռչակաւոր հաւաքածոյին հսկողութիւնը հօրեղբորս յանձնած էր:

Ահա՛ զիս անհամբերութեամբ կանչող մարդը: Երեւակայեցէք երկայնահասակ, նիհար մէկը, քարի պէս առողջ, խարտեաշ մաղերով որոնք զինքը հազիւ քառասուն տարեկան կը ցուցնեն՝ թէեւ յիսունը անցուկ էր. խոշոր աչքեր՝ որոնք կը դարձմշտկէին ահագին ակնոցներու ետին. նուրբ ու սրածայր քիթ մը՝ դանակի երկաթին նման, որու համար չար լեզուներ կ'ըսէին թէ մագնիսացած է և երկաթի փոշի կը քաշէ, մինչդեռ ճիշդը՝ քթախոտ միայն կը քաշէր, և այն ալ՝ որչա՛փ շատ:

Թէ՛ աւելցնեմ թէ հօրեղբայրս չափադիտաբար կէս-ձողաչափ երկար քայլեր կ'առնէր, և քալած ժամանակը բռունցքները կը սեղմէր, ինչ որ նշան է անհամբոյր բռնաւորութեան, կ'ըմբռնէք թէ իր ընկերութիւնը զուարճալի բան մը չէր:

Քէօնիկզկրասի տան մէջ կը բնակէինք, կէսը փայտ՝ կէսը աղիւսէ բնակարան մը որ Համպուրկի ամէնէն հին թաղին մէջէն անցնող ջրանցներուն վրայ կը նայէր, և որ 42ի հրդեհը խնայած էր:

Հինկեկ տունը քիչ մը ծռած էր և ուռած փորը դուրս կ'երկնցնէր. տանիքը աւկանջի վրայ ծռած գլխարկի ձեւն առած էր, գիծերուն ուղղութիւնը շատոնց կորսուած էին, բայց խնդիրն ան է որ դեռ կանգուն կը մնար, ի շնորհս ահագին կնճիթի մը, որ ճակատէն կը բռնէր զայն և գարնան մէջ ալ ծաղկազարդ ծիւերը պատուհաններէն ներս կ'երկարէր:

Հօրեղբայրս՝ գերման դասախօսներու բաղդատմամբ՝ հարուստ էր: Նստած տուներնիս իրեն կը պատկանէր. պարունակողն ու պարունակեալը: Պարունակեալն էր՝ իր սանուհին Կրախպէն, տասներեթը տարեկան Վիրլանտուհի մը, Մարթա սպասուհին և ես, իր եղբորորդին. որ որբ մնացած ըլլալով, փորձերուն օգնական պատրաստիչն եղայ:

Կը խոստովանիմ որ շատ սիրեցի երկրաբանութեան գիտութիւնը. երակներուս մէջ հանքագէտի արիւն կար, և չէի ձանձրանար թանկագին ժայռի կտորներուս մէջ մինակ մնալով:

Քէօնիկզկրասի տնակին մէջ երջանիկ կեանք մը կը վարէի, հակառակ տանտիրոջ անհամբեր բնաւորութեան, որովհետեւ իր բիրտ ձեւերուն հետ մէկտեղ զիս ալ քիչ չէր սիրեր: Մինակ այս մարդը սպասել չէր գիտեր և բնութենէն աւելի աճապարող էր:

Երբ աշնան, սրահին յախճապակեայ ծաղկամաններուն մէջ յափուրդի կամ ուրիշ ծաղիկի բոյսեր կը տնկէր, ամէն առտու կ'երթար տերեւներէն կը քաշէր որպէս ղի աւելի շուտ մեծնան:

Ասանկ բնաւորութիւն ունեցող մէկուն դէմ անմիջապէս հնազանդելու է: Ես ալ իր սենեակը վազեցի:

(Շար.)



## ՊԵՐՊԵՐԵԱՆԻ ՅՈՐԷԵԱՆԻՆ Ի ՊԱՏԻՒ

Համբազիսակի յաջորդ թիւը՝ իր սովորական նիւթերէն ու պատկերներէն զատ, յատկապէս պիտի զարդարուի կենսագրակա-նովն ու Յորելուդերձովն հանդերձ՝ Յորելար էֆէնտին, Անոր վազամեռիկ Տիկնոջ՝ և անոնց Ուստերց ու Դստերց պատկերներով, իբրեւ նուէր՝ Համբազիսակի կողմանէ, ի յիշատակ Պերպերեան Յորելեանի:


ԲԱՐՁՐԱՊԱՏԻՒ

## ՅԱՐՈՒԹԻՒՆ ՓԱՇԱՅ ՏԱՏԵԱՆ

Օսմանեան Պետութեան առաջնակարգ Հայ գիււանագէտ, Ազգային Կեդր. Վարչութեան Վսեմ. Ատենապետ, հանգեաւ ի Տէր:

Պետական, ազգային թէ միջազգային ամենափայլուն պատիւներուն, իր շքեղ ու բազմազգի տիտղոսներուն՝ ինչպէս եւ Տատեան դարաւոր ազգապանծ գերդաստանին արժանի ընդհանրական մեծավայելուչ հանգիստաւորութեամբ յուղարկաւորեալ:

Համբազիսակ ալ պիտի հրատարակէ Վսեմ. Հանգուցեալին կենսագրական ներբողեանը:



**ՀԱՆՐԱԳԻՏԱԿ** կը հրատարակուի ամեն ամսոյ 1ին, 10ին եւ 20ին

| Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ |            | ՀԱՍՑԷ               |        | ԳԱԽԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ      |            |
|-----------------|------------|---------------------|--------|-----------------------|------------|
| Տարեկանը        | 40 դահեկան | ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ   |        | Տարեկանը              | 45 դահեկան |
| Վեցամսեան       | 20 )       |                     |        | Վեցամսեան             | 25 )       |
| Եռամսեան        | 10 )       | Կ. ՊՈԼՍ             |        | Եռամսեան              | 12 1/2 )   |
| ՌՌԻՍԻՈՅ ՀԱՄԱՐ   |            | ԷՍԿԻ ԶԱՊԹԻԷ ԶԱՏՏԷՍԻ |        | ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ |            |
| Տարեկանը        | 4 բուպլի   |                     | ԹԻԼ 61 | Տարեկանը              | 10 ձրանք   |

Ձեռքէ կը ծախուի հաար 40 վարսայ

**1. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՆԵԼՈՒԿ**

|     |   |   |   |   |   |
|-----|---|---|---|---|---|
| 1.  | . | . | + | . | . |
| 2.  | . | . | + | . | . |
| 3.  | . | . | + | . | . |
| 4.  | . | . | + | . | . |
| 5.  | . | . | + | . | . |
| 6.  | . | . | + | . | . |
| 7.  | . | . | + | . | . |
| 8.  | . | . | + | . | . |
| 9.  | . | . | + | . | . |
| 10. | . | . | + | . | . |
| 11. | . | . | + | . | . |
| 12. | . | . | + | . | . |
| 13. | . | . | + | . | . |
| 14. | . | . | + | . | . |
| 15. | . | . | + | . | . |
| 16. | . | . | + | . | . |

1. Գաղաք մը Եւրոպական Թուրքիոյ մէջ:
2. Հին քաղաք մը Ասիական Թուրքիոյ մէջ:
3. Հայերէն տառ մը:
4. Ասիոյ մէջ լին մը:
5. Եւրոպայի մէջ նշանաւոր գետ մը:
6. Ասիական Թուրքիոյ մէջ կողմ մը:
7. Արշակունիքի մէջ կողմ մը:
8. Տուրքիոյ մէջ քաղաք մը:
9. Ասիոյ մէջ քաղաք մը:
10. Եւրոպայի մէջ գետ մը:
11. Հայերէն տառ մը:
12. Գլուխ մը Եւրոպայի մէջ:
13. Ափրիկէի հիւսիսային մասին մին:
14. Եւրոպական Թուրքիոյ մէջ նահանգ մը:
15. Եւրոպայի մէջ նշանաւոր քաղաք մը:
16. Հին քաղաք մը, յիշուած Ս. Գրքի մէջ:

Յիշեալ աշխարհագրական անուններուն ամեն մէկ տառը ետէ վերայիշեալ կէտերուն տեղ կարգով շարքէք, խաչանիշերուն տեղ եկած զրերը վերէն վար պիտի ներկայացնեն երեւելի աշխարհակալի մը անունը:

Մ. Ա. Գ. Գ.

**2. ԲԱՌԱԽԱՂ**

Մէկ տան մէջ բարեկամ ենք հրկու,  
Ես՝ առաջին, ընկերս՝ քսանմէկերորդ,  
Առանց մեզ Անգղիա, կերպիւ մ'ահարկու,  
Թուշէր օդն իսկոյն, մինչեւ ամպերն ուղղորդ:

**3. ՀԱՆՆԵԼՈՒԿ**

Ունիմ լայնածաւալ ովկէաններ,  
Բայց կարօտ եմ միշտ մէկ կաթիլ ջուրի,  
Ունիմ նշանաւոր ծաղկեալ քաղաքներ,  
Ընդ միշտ կարօտ եմ մէկ հոգիի:  
Թէ կարեւորութիւնս հարցնես՝  
Դուն իսկ երբեմն մատնանիշ կ'ընես:

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ

**ՕՁԵՐՆ**

Դպրոցի մը բոլոր աշակերտները կրնան մասնակցիլ այս խաղին, որուն համար մեծ թուով տղաք պէտք է: Ընդարձակ պարտէզի մը կամ դաշտի մը մէջ խաղին մասնակցողները զատ զատ խումբերու կը բաժնուին՝ իւրաքանչիւր խումբ ութ կամ առաւուսէն տասը տղաքներէ կազմուած: Նշանը տրուածին պէս, խումբերն կ'սկսին արշաւել պարտէզին ամէն կողմն իրարու ետեւէ. ասոնց առաջինը միշտ պէտք է որ ըլլայ ճարտար, որովհետեւ նա պիտի հրամայէ իւրաքանչիւր խումբին: Այս խումբերը պիտի ջանան օձաձեւ գիրքը կտրել, և այն խումբն որ կը կտրուի, պարտեալ է. խաղը վատարկուին հետ միանալով՝ անոր կարգը կը մեծցնէ: Ինչպէս ըսինք, պէտք է առաջնորդը ամենէն ճարպիկը ըլլայ, որպէս զի յաջողի իւր տնօրինութեամբ ամէն կողմ արշաւել, յառաջանալ, կայնիլ, վազել կողմնական շարժումներ ընել և օձաձեւ դիրքեր առնել, որպէս զի հակառակորդ խումբը չկարենայ իւր խումբին մէջէն անցնիլ եւ կտրել զինք:

ԱՐՏՕՆԱՏԷՐ — ԽՄԱԳՐԱՊԵՏ

ՄԱՐՄԷՆ ԱՌԻՍԻՆԵՆԱՆ

ՏՊԱԳՐԻՉ — ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Ն. ՇԱՆ. Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Journal of the

...

...

...

# Տպագրիչ եւ Փորագրիչ ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, ԷՍԿԻ ԶԱՊԹԻԷ ՃԱՏՏԷՍԻ, ԹԻԻ 61.

Պատիւ ունի ծանուցանել թէ՛ պատրաստ է տպագրել ամենայն խնամօք եւ մաքրութեամբ պատկերազարդ եւ թէ՛ առանց պատկերի Թուրքերէն, Հայերէն եւ Ֆրանսերէն լեզուաւ Հանդէսք, Դատագրեանք, Տեղեկագիրք, Հաշուէցոյցք, Շրջաբերականք, Հարսանեաց հրաւիրագիրք, Նամակագրութիւնք, Այցաքարտք, Մահազդք, ևայլն:

Տպարանս պատրաստ ունի 2000է աւելի բնագիտական, բնապատմական, մարմնամարզական, Ս. Գրոց պատմութեան եւ ամէն տեսակ դասագրեանց յարմար պատկերներ, որոնք ձրի կը տրուին այն Հեղինակաց ու թարգմանչաց՝ որոց գործերն կը յանձնուին իրեն, ու պէտք եղածներն ալ կը փորագրուին ամենայն նրբութեամբ:

Գոհացուցիչ եւ չափաւոր գին:

Կը խնդրուի Մեծ. Հեղինակներէն եւ տպագրութեան վերաբերեալ գործ ունեցողներէն որ նախապէս ուղղակի տպարանս դիմեն՝ առանց դրսէն ո՛ր եւ է միջնորդի, որոց չահելիքն ալ իրենք կը վաստկին:

Գաւառներէն եղած յանձնարարութիւնք ճշդութեամբ եւ խնամքով կը կատարուին՝ եթէ արժէքը տրուած հրամանին հետ ղրկուի:

## ԶԵԿՈՅՑ

Հանելուկներու լուծումները եւ լուծողներու անուններն՝ առաջարկուած թիւէն 20 օր վերջը հրատարակուած թերթին մէջ պիտի դրուին:

Հանրագիտակի ներկայ թիւը կը ղրկուի իբր նմոյշ: Անոնք որ կը փափաքին բաժանորդ գրուիլ՝ բարեհաճութիւն կ'ունենան մեզի իմաց աալու: Իսկ անոնք որ թերթս ընդունիլ չեն ուզեր, շատ ազնիւ կ'ըլլան եթէ անմիջապէս ետ ղրկեն այս առաջին թիւը:

Հրատարակչին հասցէն է.

نشانه بربریان مطبعی

استانبول اسکی ضابطیه جاده سی و نمره ٦١

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Կ. Պոլիս Էսկի Զապրիյէ ՃաՏՏԷՍԻ թիւ 61

NICHAN BERBÉRIAN

IMPRIMEUR-ÉDITEUR

Stamboul, Eski Zabtiyé Djaddéssi N. 61

## ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ: ԱՅՑԱՔԱՐԴԵՐՈՒ

### ՈՐՈՇԵՍԱԼ ԳԻՆԵՐԸ

|                                 |       |
|---------------------------------|-------|
| Մէկ լեզուէ միջակ թուղթ 100 հատը | 7 ղշ. |
| Երկու » » » » »                 | 9 »   |
| Երեք » » » » »                  | 11 »  |
| Մէկ » ընտիր » » »               | 8 »   |
| Երկու » » » » »                 | 10 »  |
| Երեք » » » » »                  | 12 »  |
| Ոսկեզօծ՝ եզերքներով ընտիր թուղթ | 16 »  |
| » » գունաւոր » » »              | 17 »  |
| » թրթրլը եզերք. ճերմակ » » »    | 17 »  |
| » » » գունաւոր » » »            | 18 »  |

Թուրքերէն Սիւլիս, Թաալիւք եւ Բըզգա գրով փորագրեալ այցաքարդերուն համար՝ 12 ղրշ. աւելի ծախք մը վճարել պէտք է:

Հուսանկարով միասին տպագրեալ այցաքարդերուն 100 հատը 60 ղրշ.

Գաւառներէ եղած յանձնարարութեանց համար թղթատարի ծախք չի պահանջուիր: Վճարմունք կանխիկ են:

Հանրագիտակ ձեռքի կը ծախուշի Պոլսոյ մէջ հատը  
40, իսկ գաշառաց մէջ 50 փարայ: